ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.11.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2019/80

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան

Բողոք բերող՝ «Գավառտրանս» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

Բողոքաբեր՝ «Գավառտրանս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Հովհաննիսյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/19» ծածկագրով բաց մրցույթ, կենցաղային թափոնների կոնտեյներների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Գավառտրանս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 10.10.2019թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/19» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին և պատվիրատուին անվավեր ճանաչելու գնահատող հանձնաժողովի կողմից 2019 թվականի հոկտեմբերի 1-ին հաստատված պայմանագիր կնքելու մասին որոշումը և հանձնաժողովի 25.09.2019թ.-ի թիվ 3-րդ արձանագրության 3.3 և 4.1 կետերով կայացրած որոշումներն ու «ԷՍԵ ԳմբՀ» (ESE GmbH) և «Գավառտրանս» ՍՊԸ-ի (համատեղ գործունեության պայմանագիր) հայտը գնահատել բավարար՝ ճանաչելով առաջին տեղն զբաղեցնող մասնակից:

Բողոքներ քննող անձին (Գ. Ներսիսյանին) բողոքը մակագրվել է 10.10.2019թ.-ին: 11.10.2019թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/73 համարի ծածկագիրը: 17.10.2019թ.-ին և 01.11.2019թ.-ին նշանակվել են նիստեր:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 24.10.2019թ.-ի թիվ 580-Ա Բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանին 2019-2020թ.-երի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին հրամանը, թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/72 համարի ծածկագրով բողոքի քննությունը 04.11.2019թ.-ին փոխանցվել է Բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին:

04.11.2019թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/80 համարի ծածկագիրը և 06.11.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Բողոքի քննությունն ավարտվել է 06.11.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 08.11.2019թ.-ին:

2. <u>«Գավառտրանս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Գավառտրանս» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանը Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կենցաղային թափոնների կոնտեյներների ձեռքբերման նպատակով ս.թ. օգոստոսի 1-ին կազմակերպել է ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/19 ծածկագրով բաց մրցույթ: Ընթացակարգին մասնակցել է նաև մեր կազմակերպությունը՝ «ԷՍԷ ԳմբՀ» (ESE GmbH) և «Գավառտրանս» ՍՊԸ կոնսորցիումի միջոցով: Հրակերի առաջին մասի 7-րդ կետի համաձայն՝ հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, որի չափը

հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին: Տեղեկացնում ենք, որ մեր կողմից, որպես հայտի ապահովում հրավերում նշված գանձապետարանի հաշվին մուտք է եղել կանխիկ փող 24.09.2019թ. օրվա դրությամբ 9300000 (ինը միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ: 25.09.2019թ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել մերժելու «Գավառտրանս» ՍՊԸ-ի հայտը, քանի որ մասնակիցը չի կցել հայտի ապահովումը պատճառաբանությամբ՝ հիմք ընդունելով հրավերի 7.1 կետը: Խնդրում եմ նկատեք, որ մենք մրցույթին մասնակցել ենք ԷՍԷ ԳմբՀ» (ESE GmbH) և «Գավառտրանս» ՍՊԸ կոնսորցիումի միջոցով, մեր գնային առաջարկը նվազագույնն է և երկրորդ տեղն զբաղեցրած մասնակցի գնային առաջարկի համեմատ տնտեսվում է շուրջ 1 մլն դրամ: Գտնում ենք, որ ընթացակարգի հանձնաժողովը ոչ իրավաչափ է մերժել մեր հայտը հետևյալ հիմնավորումներով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ պարտավորությունների կատարման ապահովման եղանակները սահմանող 368-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորությունների կատարումը կարող է ապահովվել գրավով (գլուխ 15), տուժանքով, պարտապանի գույքի պահումով, երաշխավորությամբ, երաշխիքով, նախավճարով և օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ եղանակներով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ հայտի ապահովումը նույն օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոցն է: Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 142-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում դրամական միավորը Հայաստանի Հանրապետության դրամն է:

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի դ. պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման

ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (Ականավորված) տարբերակը՝ պայմանով, որ, եթե մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղեցրած, ապա սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնում է դրա բնօրինակը:

Ի մի բերելով վերոգրյալը, արձանագրվում է կանխիկ փողով հայտի ապահովմանը ներկայացվող օրենսդրական կարգավորման հետևյալ իրավիճակը.

- *ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 24-րդ գլխով սահմանված են պարտավորությունների կատարման ապահովման եղանակները, այդ թվում տուժանքը և բանկային երաշխիքը,*
- *ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 368-րդ հոդվածը նախատեսում է պարտավորության կատարման ապահովման այլ եղանակ օրենքով սահմանելու հնարավորություն,*
- *Օրենքով նախատեսվել է պարտավորության կատարման ապահովման այլ եղանակ՝ կանխիկ փող,*
- *Կանխիկ փողն ակնհայտորեն էապես տարբերվում է տուժանքից և բանկային երաշխիքից իր տեսակով, որոնք հանդիսանում են միակողմանի գործարք փաստաթղթային տեսքով (տե՛ս օրենսգրքի 369, 370, 383),*
- *Կարգով սահմանված է հայտի ապահովումը բանկային երաշխիքով ներկայացնելու դեպքում ղրանից արտատպված (Ականավորված) տարբերակը հայտով ներկայացնելու պահանջ,*
- *Կարգով կանխիկ փողի տեսքով հայտի ապահովում ներկայացնելու դեպքում վճարման անդորրագրի ներկայացման պահանջ սահմանված չէ:*

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավանորմերում առկա կարգավորումները՝ եզրահանգում ենք, որ ապահովումը կանխիկ գումարի տեսքով ներկայացնելը տարբերվում է պարտավորության ապահովման այլ տեսակներից իր բնույթով, այդ իսկ պատճառով օրենսդիրը չի սահմանել կանխիկ գումարի տեսքով հայտի ապահովում տրամադրելիս այլ փաստաթուղթ ներկայացնելու պարտավորություն:

Բացի վերոգրյալը, անհրաժեշտ ենք համարում նշել, որ ԵՔ-ԲՄՄՊՁԲ-19/19 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը 3-րդ արձանագրության 3.3-րդ կետում նշել է, որ Մեր կազմակերպության հայտը չի համապատասխանում նույն ընթացակարգի հրավերի 7-րդ կետով սահմանված պահանջներին, որը սահմանում է՝

«7.1. Մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում:

Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին: Ընդ որում, եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն կետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման:

Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000466» գանձապետական հաշվին, որը ենթակա է վերադարձման այն ներկայացրած մասնակցին՝ սույն ընթացակարգի շրջանակում պայմանագիրը կնքվելուց կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո քսան աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն հրավերի 1-ին մասի 7.3 կետով նախատեսված դեպքերի:» Ինչը չի համապատասխանում իրականությանը, քանի որ մեր կազմակերպության կողմից ընթացակարգի հրավերով սահմանված կարգով համապատասխան գանձապետական հաշվին է փոխանցվել 9300000 (ինը միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ: Ուստի, կարելի է փաստել, որ ընթացակարգի հրավերի 7.1-րդ կետով սահմանված որևէ պահանջ մեր կազմակերպության կողմից չի խախտվել և իրավաչափ չէ նման հիմնավորմամբ մեր կազմակերպության կողմից ներկայացված հայտի մերժումը:

Հայտերի բացման նույն օրը գրությամբ դիմել ենք Պատվիրատուին և գնահատող հանձնաժողովին բացատրելով իրավիճակը, սակայն մինչ օրս որևէ պատասխան չենք ստացել:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն, որ հայտի ապահովում է հանդիսանում կանխիկ փողի ձևով Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000466» գանձապետական հաշվին փոխանցված 9000000 դրամ գումարը, այլ ոչ թե փոխանցումը հավաստող փաստաթուղթը և հիմք ընդունելով Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 50-րդ հոդվածի 7-րդ մասը», Ընկերությունը Բողոքներ քննող անձից խնդրել է պարտավորեցնել «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/19» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին և պատվիրատուին անվավեր ճանաչելու գնահատող հանձնաժողովի կողմից 2019 թվականի հոկտեմբերի 1-ին հաստատված պայմանագիր կնքելու մասին որոշումը և հանձնաժողովի 25.09.2019թ.-ի թիվ 3-րդ արձանագրության 3.3 և 4.1 կետերով կայացրած որոշումներն ու «ԷՍԵ ԳմբՀ» (ESE

GmbH) և «Գավառտրանս» ՍՊԸ-ի (համատեղ գործունեության պայմանագիր) հայտը գնահատել բավարար՝ ճանաչելով առաջին տեղն զբաղեցնող մասնակից:

Ի լրումն «Գավառտրանս» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքի, Ընկերությունը 05.11.2019թ.-ին ներկայացված թիվ ԳՏ-59 գրությամբ հայտնել է, որ *«Տվյալ պահին գործող իրավակարգավորման համաձայն՝ գնման ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա ցանկացած անհամապատասխանության դեպքում պետք է հնարավորություն ընձեռնվի մասնակցին շտկելու այդ անհամապատասխանությունը: Փաստորեն գործադիր մարմինը, ի դեմս Լիազոր մարմնի, գտնում է, որ հայտը ներկայացնելիս ցանկացած վրիպակ ենթակա է շտկման, ինչը չի հանգեցնի նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցի հայտի՝ տեխնիկական վրիպակի պատճառով մերժման: Կից ներկայացնում են նաև բանկի կողմից տեղեկանք՝ գումարի փոխանցման վերաբերյալ:»:*

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 11.10.2019թ.-ին գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետարանին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Գավառտրանս» ՍՊԸ-ի կողմից 10.10.2019թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում, առարկություններ կամ կարծիք՝ չներկայանալով նաև նիստերին:

4. <u>ԳԲՔԱ-LO-2019/80 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից կենցաղային թափոնների կոնտեյներների ձեռքբերման նպատակով 01.08.2019թ.-ին հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/19» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ):

Մրցույթի հրավեր 1-ին մասի 4.3-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում, որը ներկայացվում է կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Ընդ որում հայտով ներկայացվում է կանխիկ փողի վճարումը հավաստող փաստաթղթի բնօրինակից կամ բանկային երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակը…:

Նույն մասի 7.1 կետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում:

Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000466» գանձապետական հաշվին…:

Մրցույթի հրավերի 2-րդ մասի, հայտը պատրաստելու մասին հրահանգի 2.5-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝ հայտի ապահովում, որը ներկայացվում է կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Ընդ որում հայտով ներկայացվում է կանխիկ փողի վճարումը հավաստող բնօրինակ փաստաթղթից կամ բանկային երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակը…:

Մրցույթին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել նաև «ԷՍԵ ԳմբՀ» (ESE GmbH) և «Գավառտրանս» ՍՊԸ-ն (համատեղ գործունեության պայմանագիր):

Մասնակցի կողմից, կենցաղային թափոնների կոնտեյներների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/19» ծածկագրով բաց մրցույթին ներկայացված մասնակցության հայտով՝ հայտի ապահովում միջոց հանդիսացող որևէ փաստաթուղթ չի կցվել:

Մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 25.09.2019թ.-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին՝ բացառությամբ «Գավառտրանս» ՍՊԸ-ի: Ընկերության կողմից ներկայացված հայտը չի

համապատասխանում հրավերի 7.1 կետի պահանջներին, այն է՝ մասնակիցը չի կցել հայտի ապահովումը: Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով, որոշել է «Գավառտրանս» ՍՊԸ-ի հայտը մերժել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Գավառտրանս» ՍՊԸ-ի կողմից 10.10.2019թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է ամբողջությամբ մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի հաստատած հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Հայտերը գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ այն հայտերը, որոնցում բացակայում է հայտի ապահովումը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովի կողմից ներկայացված հայտերը մերժվում են, քանի որ առկա չէ օրենքով սահմանված կարգով հայտի ապահովման շտկման հնարավորություն:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողողոքներ քննող անձն արձանագրում է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից կենցաղային թափոնների կոնտեյներների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/19» ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Գավառտրանս» ՍՊԸ-ն («ԷՍԵ ԳմբՀ» (ESE GmbH) ընկերության հետ համատեղ գործունեության պայմանագիր):

Ընկերության կողմից, Մրցույթին ներկայացված մասնակցության հայտով՝ հայտի ապահովում միջոց հանդիսացող որևէ փաստաթուղթ չի կցվել:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ հայտի ապահովումը նշված օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտը, որը գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում պարունակում է նաև հայտի ապահովումը, վավեր է մինչև սույն օրենքին համապատասխան պայմանագրի կնքումը, մասնակցի կողմից հայտը հետ վերցնելը, հայտի մերժումը կամ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելը: Նշված դրույթը ներառված է նաև վերոհիշյալ ծածկագրով գնման ընթացակարգի հրավերում:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով, հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

Մրցույթի հրավեր 1-ին մասի 4.3-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում, որը ներկայացվում է կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Ընդ որում հայտով ներկայացվում է կանխիկ փողի վճարումը հավաստող փաստաթղթի բնօրինակից կամ բանկային երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակը…:

Նույն մասի 7.1 կետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում: Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000466» գանձապետական հաշվին…:

Մրցույթի հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու մասին հրահանգի 2.5-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝ հայտի ապահովում, որը ներկայացվում է կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Ընդ որում հայտով ներկայացվում է կանխիկ փողի վճարումը հավաստող բնօրինակ

փաստաթղթից կամ բանկային երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակը…:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է նաև հայտի ապահովման միջոց հանդիսացող փաստաթուղթը՝ հայտի ապահովումը, որը ներկայացվում է կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000466» գանձապետական հաշվին: Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Գավառտրանս» ՍՊԸ-ի կողմից Մրցույթին ներկայացված մասնակցության հայտով՝ հայտի ապահովում միջոց հանդիսացող որևէ փաստաթուղթ չի կցվել, որպիսի պայմաններում Հանձնաժողովը հնարավորություն չի ունեցել գնահատելու Ընկերության կողմից կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովման միջոց հանդիսացող փաստաթղթի համապատասխանությունը գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և Մրցույթի հրավերով սահմանված պահանջներին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ գնահատող հանձնաժողովը գործել է իրավաչափ և «Գավառտրանս» ՍՊԸ-ի («ԷՍԵ ԳմբՀ» (ESE GmbH) ընկերության հետ համատեղ գործունեության պայմանագիր) հայտը անբավարար գնահատելու և վերջինիս հայտը մերժելու մասին որոշումը բխում է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Գավառտրանս» ՍՊԸ-ի կողմից 10.10.2019թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2019/80 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ